թիւնից հաւասարապէս օգտուել են ինչպէս Եփրատ — Տիգրիսի եւ Քարուն գետերի միախառնունքում, այդպէս էլ դրանց ակունքում: Գիտութիւնը—գիտութիւնները համահաւասարապէս ընդհանրական սեփականութիւն են դարձել Միջագետքում, գետերի խառնունքից մինչեւ ակունքը:

Կրի գործածութիւնը Նայիրի երկրում եւ Ճորոխի Աւազանում աւելի հին է եւ նմուշները կան. բայց վիճելի է, թէ արդեօ՞ք դրանք Ք. ծ. ութ-տասը դար առաջ է՞ն եղել, թէ այդ շրջանումն են միայն կատարուել. բայց երկաթի ու պողպատի գործածութիւնն անվիճելի է, որ սեպաձեւ արձանագրութիւններից 10—20 դար վաղ է սկսուած: Սեպաձեւ արձանագրութիւնները թէեւ Ասորեստանում եւ Ակկատների երկրում փափուկ կաւի վրայ կարելի էր փայտի կամ պղնձի դրով փորել եւ ապա թրծել-քարացնել. բայց Էլամի, Հաթթերի եւ Նայիրի երկրի որձաքարի վրայ եղած քանդակները պղնձով, արոյրով, ոսկով, արծաթով չէր կարելի կատարել. անհրաժեշտ էր պողպատերկաթ: Նայիրի երկրում մինչեւ օրս գտնուած հարիւրից աւելի որձաքարի սեպաձեւ արձանագրութիւնների նուրբ քանդակներն անկասկած պողպատի դրով են քանդակուած, որոնք 1400—650 թ. թ. են կրում Ք. ծ. առ: Բայց սրանցից էլ 10—20 դարով հին են որձաքարէ գլանաձեւ յղկուած եւ